«ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՇՐՋԱՆԻ» ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Կ. Ն. ՅՈՒԶՐԱՇՅԱՆ (Լենինգրադ)

IX դարի վերջերից, երբ Հայաստանում սկսվում է վերականգնվել ինքնուրույն պետականությունը, երկիրը կրկին անգամ դառնում է միջազգային իրավունքի ոչ միայն օբյեկտ, այլև սուբյեկտ, գործիչ ուժ։ Նորաստեղծ պետություններն իրենց կազմավորման օրվանից բարդ հարաբերությունների մեջ են գտնվում ոչ միայն միմյանց, այլև հարևանների, առավելապես Արաբական խալիֆայության ու Բյուզանդական կայսրության հետ։ Չնայած վերջին տարիներին լույս են տեսել «Բագրատունյաց շրջանին» նվիրված մի շարք կարևոր աշխատություններ[1]*, այնուհանդերձ Հայաստանի իրավական ստատուսը դեռևս անբավարար է ուսումնասիրված։ Մինչդեռ այդ պրոբլեմի կարևորությունը դժվար թե վեճի առարկա լինի։ Սույն հոդվածը նվիրված է այդ խնդրի որոշ կողմերի լուսաբանմանը։*

* * *

Ինչպես հայտնի է, արաբական տիրապետության ողջ շրջանում Հայաստանի բնակչության նկատմամբ վարչական ֆունկցիաներ վարում էին ոչ միայն խալիֆայության ներկայացուցիչ վալիները, այլև տեղացի իշխանները։ Կարծիք է հայտնվել անգամ, թե վարչապետի պաշտոնը փոխարինաբար ստանձնել են ինչպես արաբները, այնպես և տեղացիները[2]*։ Սակայն արաբական կառավարիչների ցուցակի անընդհատությունը հերքում է այդ տեսակետը. իրականում տեղացի վարչապետները իրենց պաշտոնը վարում էին խալիֆայության պաշտոնյաներին առընթեր*[3]*։ Տեղացիների մասնակցու-*

---

[1] *Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։ Նույնի՝ «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2 (նաև* REArm, *III, 1966)։ Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969։ «Կոստանդին Ծիրանածին», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970։ Բ. Առաքելյան, Հայկական պետականության վերականգնումը IX դարի վերջերին, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4։*

[2] J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818, *էջ 415 և հտ.։ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 562։ Հակառակ կարծիքի՝* M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, *էջ 59։*

[3] *Արաբական կուսակալների ցուցակը տե՛ս* Ghazarian, Armenien, *էջ 38—43։* J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, *էջ 336—347։ Ռ. Ֆամեր, Ժամանակագրություն Հայաստանի ոստիկաններու առաջին Աբասյանց օրով, Վիեննա, 1933։ Հ. Նալբանդյան, Արաբ ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 8։*

թյունը արաբական վարչության արտաքսվոր երևույթ չէ։ Հայտնի է, որ խալիֆայության պաշտոնյաների մի զգալի մասը կազմում էին քրիստոնյաները կամ այն մահմեդականները, որոնք դավանափոխ էին եղել բռնի ուժով։

Հայաստանում ազնվականության ներկայացուցիչը արաբական վարչության կազմում կրել է «Հայոց իշխան» տիտղոսը։ Չգտնելով ամուր հաստատվել Հայաստանում, բյուզանդական կառավարությունը հայ իշխաններին շռայլորեն շնորհում է պատրիկիոս տիտղոսը։ Հունա-հռոմեական պատրիկիոսին համապատասխանում է հայերեն պատրիկը և արաբերեն բատրիկը։ Այդ տիտղոսը այնքան տարածված է եղել, որ բատրիկ ասելով՝ արաբները հաճախակի հասկացել են առհասարակ հայ իշխաններին։ Հայերն իրենք «Հայոց իշխանին» երբեմն անվանում են «Հայոց պատրիկ»։ Անգամ բյուզանդացիք վերաիմաստավորում են այդ պատվանունը. այսպես, Սմբատ Բագրատունուն (VII—VIII դդ.) բյուզանդական պատմիչ Թեոփանեսն անվանում է ὁ πατρίκιος Ἀρμενίας, չնայած բյուզանդացու համար պատրիկիոսը ոչ թե պաշտոն է, այլ պատվական տիտղոս։ IX դարում Հայոց գերագույն իշխանը անվանվել է նաև իշխանաց իշխան. այդ տիտղոսի արաբական ձևն է՝ բատրիկ ալ-բատարիկա, բյուզանդականը՝ ἄρχων τῶν ἀρχόντων, երկուսն էլ հայերենի բառապատճեններ են։

838 թ. Մովսես Կաղանկատվացին հիշատակում է «տէրանց տէրն Յովանէս որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր»[5]։ Դա Սահլի որդի Հովհաննեսն է, որը հայտնի է նաև Մուավիա, իսկ Ն. Ադոնցի կարծիքով՝ նաև Համամ անունով։ Տէրանց տէր և իշխանաց իշխան տիտղոսների համանմանությունը բացահայտ է։ 903 թ. արձանագրության մեջ Աշոտ Ա որդի Շապուհ Բագրատունին իրեն անվանում է տէրանց տէր[6], մինչդեռ մյուս աղբյուրներից հայտնի է, որ Շապուհը եղել է իշխանաց իշխան։ Ճիշտ է, Շապուհը իշխանաց իշխան է կոչվել որպես արքայորդի (տե՛ս ստորև)։ Սակայն այդ տիտղոսների ձևական նմանությունը, ինչպես նաև համապատմական պայմանները թույլ են տալիս կռահելու, որ տէրանց տէր—իշխանաց իշխան Հովհաննեսը, ճիշտ այնպես, ինչպես «Հայոց իշխանների» մի շարք, եղել է տեղական ինքնավարության ներկայացուցիչ, միաժամանակ Անդրկովկասում ներկայացնելով նաև արաբական կառավարությունը։

Մուտասիմ խալիֆը 838 թ. արշավանք է նախաձեռնում դեպի Ամորիոն փոքրասիական քաղաքը։ Նրա բանակի կազմի մեջ են մտնում Հայաստանի բոլոր զորքերը Վասպուրականցու և ինքնին արքունների արքունի գլխավորությամբ, հաղորդում են բյուզանդական պատմիչները[7]։ Եթե մեր դատողությունները Հովհաննեսի տիտղոսի, ինչպես և նրա կատարած դերի

---

[4] Հայոց իշխանների մասին տե՛ս հատկապես Ա. Տեր-Ղևոնդյանի վերը հիշատակված հոդվածը։

[5] Տե՛ս «Արարատ», 1897, ապրիլ, էջ 162։

[6] Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, ՍՊՐ, 1913, էջ 6, 903։ Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 129—130։

[7] Gen., էջ 67. 16—17; Theoph. Cont. էջ 127. 1—2; Scyl., էջ 75.30—51; Cedr., II, էջ 133.4—5 (վկայակոչումներն ըստ Բոննի մատենաշարի. վերջին երկու հեղինակը Վասպուրականցուն չեն հիշատակում)։

վերաբերյալ ճիշտ են, ապա պետք է ենթադրել, որ հենց նա է եղել այստեղ հիշատակված արքոնների արքոնը։

Բագարատ Բագրատունուն, որը 830—851 թթ. Տարոնի իշխանն է եղել, Հովհաննես Դրասխանակերտցին անվանում է հրամանատար և իշխան իշխանաց[8]։ Արաբական պատմիչի համար նա բատրիկ ալ-բատարիկա է[9]։ Այդ տվյալների հիման վրա, հակառակ Հ. Թոփչյանի կարծիքին, կարելի է պնդել, որ իշխանաց իշխանի տիտղոսը Բագարատին տրվել է պաշտոնապես[10]։

Մեր շարքի վերջին իշխանաց իշխանը եղել է Աշոտ Բագրատունին։ Բագարատի եղբորորդին, Բագրատունյաց թագավորական հարստության հիմնադիրը, 5 տարի լինելով սովորական իշխան, 25 տարի իշխանաց իշխանի պաշտոն վարեց[11]։ Այդ ուղղությամբ նրա գործունեության վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանվել են որոշ մանրամասնություններ։ Հայտնի է, որ իր պաշտոնը Աշոտը ստացել է Ալի Արմանի ոստիկանից։ Աշոտին հանձնարարված է եղել տուրքերի դանձումը[12]։ Մյուս իշխանների նկատմամբ Աշոտը դիտվում է որպես նախագահանստալն[13]։ Նրա իշխանությունը տարածվում է ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի և Աղվանքի, այսինքն ողջ «Արմինիայի» վրա[14]։ Աշոտ Բագրատունու՝ իշխանաց իշխան լինելու մասին արաբական աղբյուրները լռում են, սակայն հազիվ թե կասկած հարուցի այն, որ արաբների համար նա նույնպիսի բատրիկ ալ-բատարիկա է եղել, ինչ և նրա հորեղբայր Բագարատը։

Հայաստանում թագավորական իշխանության հաստատումից հետո իշխանաց իշխանի տիտղոսը որոշ ժամանակ տրվում էր գահաժառանգին[15]։ Իշխանաց իշխան են եղել ապագա թագավորներ Սմբատ Ա և Աշոտ Բ Բագրատունիները[16]։ Աշոտից առաջ Սմբատ Ա օրոք իշխանաց իշխան է եղել վերջինիս եղբայր Դավիթը[17]։ Նոր պայմաններում այդ անվանակոչումը կորցրել էր, իհարկե, իր նախկին բովանդակությունը։ Հնում իշխանաց իշխանը, ինչպես և Հայոց իշխանը, հանդես էր գալիս իբրև ինչ-որ միջնորդ խալիֆայության և տեղացի ազնվականության միջև։ Այժմ այդ դերը կատարում էր (կամ արիտի կատարեր) թագավորը։ Հնարավոր է, որ նոր շրջանի

---

8 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 115. այլուր (էջ 116—118) Բագարատը անվանված է իշխան. Աբուլ-Ֆարաջի համար նա Հայոց պատրիկ է։

9 Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari, cum aliis edidit M. J. de Goeje, tertia series, III, Lugduni Batavorum. 1883—1884, էջ 1406։

10 H. Thopdschian, Politische und Kirchengeschichte Armeniens unter Ašot I. und Smbat I. „Mitteilungen des Seminars für orientalische Sprachen an der Friedrich-Wilhelms Universität zu Berlin", VIII, 1905, էջ 119, հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայությունները, էջ 101։

11 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց ի լոյս ընծայեալ Ք. Պէյատկանեանէ», ՍՊՐ, 1887, էջ 229—230, հմմտ. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերականաց», հրատ. Ստ. Մալխասեանց, ՍՊՐ, 1885, էջ 158։

12 Դրասխանակերտցի, էջ 133։

13 Թովմա Արծրունի, էջ 218, հմմտ. էջ 107։

14 Թովմա Արծրունի, էջ 206։ Ասողիկ, էջ 158։

15 H. Daghbaschian, Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni. Berlin, 1893, էջ 86։

16 Դրասխանակերտցի, էջ 143, 198։

17 Նույն տեղում, էջ 194։

իշխանաց իշխանի ֆունկցիաների մեջ էր մտնում ներքին քաղաքականությունը, կենտրոնական իշխանության և առանձին իշխանների միջև եղած հարաբերությունների հարթումը։ Հայտնի է, որ Աշոտ Ա մահվանը նրա որդի իշխանաց իշխան Սմբատը բացակայել է. այդ պահին նա խաղաղեցնում էր Գուգարքը[18]։ Արդյոք նման պարտականություններ չե՞ն ակնարկված Լազարյան ավետարանի հիշատակարանում (887), ուր Սմբատի իշխանությունը որակավորված է իբրև տէրութիւն[19]։ Բացառված չէ նաև, որ այդ անվանումը կորցրել էր իր պաշտոնական բովանդակությունը և կիրառվում էր սոսկ տիտղոսային նշանակությամբ։ Բայց բոլոր դեպքերում տեղի էր ունեցել տիտղոսի վերածնություն, մի հանգամանք, որ գրականության մեջ հաճախակի աչքաթող է արվում[20]։

Իշխանաց իշխանի պատիվը լայն գործածության մեջ է եղել նաև թագավորական ընտանիքից դուրս, ըստ որում այստեղ նրա տիտղոսային բնույթը բացահայտվում է ամենայն պարզությամբ։ Այսպես, Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին (+874) նույն սկզբնաղբյուրում անվանված է իշխանաց իշխան և մեծ իշխան[21]։ 983 թ. Գողթնի ամիրա Աբուսյուիը (Աբուդուլաֆ) հարձակվում է Վասպուրականի վրա։ Նրա դեմ դուրս են գալիս Վասպուրականի իշխանաց իշխան Աբլխարիբը, իշխան Գրիգորը և մարզպան Տիգրանը։ Հակառակ ուղղակի տեղեկությունների բացակայության, Աբլխարիբը իրավացիորեն դիտվում է Վասպուրականի սպարապետ։ Այստեղից կարելի է հետևցնել, որ իշխանաց իշխանը նրա տիտղոսն է[22]։ Ասողիկը հաղորդում է, որ Աշոտ Գ Բագրատունին հրավիրում էր իր մոտ հաշմանդամներին և «զոմանս ի նոցանէ իշխանս և իշխանաց իշխանս և կիւրապաղատս անուանէր և զբօսնոյր նոքօք»[23]։ Իշխանաց իշխան կարող են լինել ազնվական տոհմի մի քանի անդամներ։ Այսպես, այդ տիտղոսը կրել է Վահրամ Պահլավունին[24] և միաժամանակ նրա որդի Զաքարեն[25]։ Տոհմային էր այդ տիտղոսը նաև Բակուրիանների մոտ։ Իշխանաց իշխան էին Ջոջիկն ու նրա որդիներ Փերսն ու Բակուրանը[26], հայտնի Գրիգոր Բակուրիանի հայրը։ Բակուրանի տիտղոսը պահպանվել է նաև վրացական Լրիսաւիրա մրավարի և հունական ἀρχων τῶν ἀρχόντων ձևով[27]։ Ժ. Լորանը սխալվում է՝ Բակուրանի տիտղոսը դասելով թագավորականների շարքում[28]։ Պահպանվել է

18 Նույն տեղում, էջ 143։

19 Դարեղին [Հովսեփյան], Հիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, սյունակ 84։

20 Պետք է ասել, որ նոր բովանդակությամբ ևս տիտղոսը ինչ-որ կերպ առնչվում է արաբական վարչության հետ. այսպես, Սմբատ Ա որդի Աշոտը իշխանաց իշխանի պատիվը ստանում է խալիֆի ներկայացուցիչ Յուսուֆի ձեռքից (Դրասխանակերտցի, էջ 198)։

21 Տե՛ս, օրինակ, Թովմա Արծրունի, էջ 132, 206 և հտ.։

22 Ասողիկ, էջ 189—190։ Մ. Ջամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 866—867։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 21, № 2։

23 Ասողիկ, էջ 180։

24 Նույն տեղում, էջ 270։ Н. Орбели, Надписи Мармашена, Пг., 1914, № 8.

25 Տե՛ս «Էջմիածին», 1961, № 5, էջ 48։

26 Ասողիկ, էջ 193, 269, 270։

27 А. Шанидзе, Грузинский монастырь в Болгарии и его типик. Грузинская редакция типика, Тбилиси, 1971, էջ 61։ С. Г. Каухчишвили, Георгика, V, Тбилиси, 1963, էջ 98. 23—24։

28 Laurent, Armenie, էջ 285, ծան. 2։

մագիստրիսսա և արքոնների արքոնտիսսա Թեոփանոյի կնիքը։ Հրատարակիչները իրավամբ դիտում են նրան որպես հայ կամ վրացի իշխանի կին կամ դուստր[29]։

Արաբերեն բատրիկ ալ-բատարիկան ևս ստացավ տիտղոսի նշանակություն։ 940 թ. համդանյան ամիրա Սեյֆ ալ-Դաուլան ներխուժեց Տարոն, Իբն Թուրնիկի երկիրը, հաղորդում է Իբն Զաֆիրը։ Խոսելով նույն դեպքի մասին, Իբն ալ-Ազրակը անվանում է հայ իշխանին «Աշոտ իբն Զարջուր, բատրիկ ալ-բատարիկա Հայաստանում»[30]։ Ամենայն հավանականությամբ, խոսքը հռչակավոր Գրիգոր Տարոնացու որդի Աշոտի մասին է, որն իր դիրքով կարող էր լինել իշխանաց իշխան միայն տիտղոսային նշանակությամբ։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ իշխանաց իշխան տերմինը եղել է բազմիմաստ, պաշտոնական և տիտղոսային։ Դժվար չէ կռահել, որ թագավորական իշխանության ծագումը Հայաստանում IX դարի վերջերին կապված է իշխանաց իշխանների մի կատեգորիայի՝ խալիֆի վստահյալ անձերի, արաբական վարչության ու տեղական ազնվականության միջնորդների հետ։

IX դարի 80-ական թթ. Հայաստանի և խալիֆայության միջև ուժերի հարաբերակցությունն այնպիսին էր, որ Աշոտ Բագրատունին կարողացավ ձեռք բերել թագավորական աստիճան։ Իշխանաց իշխանի պարտականությունները արաբների նկատմամբ նա, անշուշտ, չձգեց, շարունակելով մնալ խալիֆի ներկայացուցիչ։ Այդ առաջին շրջանում թագավորությանը հատուկ էր որոշ արհեստականություն, դա զգացել են իրենք հայերը։ Բագրատունիները, ասում է Սամվել Անեցին, իշխում էին աշխարհի մեծ մասի վրա, թեպետև թագավորեցին «նոցա (այսինքն «աղդին Իսմայեղի»— Կ. Յ.) հրամանաւ»[31]։ Աշոտի արքայական թագը արաբների կողմից հարկադրական մի գիջում էր, որի նպատակն էր հնարավորին չափ երկար պահել իշխանությունը, պահպանել իրենց ներկայությունը երկրում։ Բայց հայ թագավորության արհեստականությունը, որի մասին ասվեց քիչ վերև, դրանով էր սահմանափակվում։ Ըստ էության, թագավորական իշխանության վերածնությունը պատճառաբանված էր նախ և առաջ ներքին ուժերի աճմամբ և ուժեղացմամբ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական և հոգևոր առումով[32]։

Աշոտ Ա Բագրատունուն թագավոր օծեց կաթողիկոսը, բայց իշխանության նշանակները նա ստացավ խալիֆի անունից գործող արաբական կուսակալից։ Կարծիք է հայտնվել, որ արաբական նշանակները տեղ են հասել օծումից հետո[33]։ Մինչդեռ Հովհաննես Դրասխանակերտցու տվյալները, որն

---

29 A. Szemioth, T. Wasilewski, Sceaux byzantins du Musée National de Varsovie, I. „Studia Źródłoznawcze", XI, 1966, № 8.

30 M. Canard. Sayf al Daula. Recueil de textes relatifs à l'emir Sayf al Daula le Hamdanide, Alger, 1934, էջ 74, 76—77. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայություններ, էջ 152—153։

31 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5619, թ. 88ա։

32 Տե՛ս հատկապես Բ. Առաքելյանի՝ առաջին ծանոթության մեջ հիշատակված հոդվածը։

33 Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 92։ Վ. Հակոբյան. Մատեն. ժամանակագրություններ XIII—XVIII դդ., II, Երևան, 1956, էջ 156 և հտ. (ծան. 44)։

այս հարցում մեր ամենից հեղինակավոր և վստահելի աղբյուրն է, մերժում են նման ենթադրությունը։ Կաթողիկոսը Աշոտին օծեց նշանակները ստանալուց հետո[34], օծումը թագավորության պաշտոնական սկիզբն է եղել։ Աշոտ Ա բացի[35] արաբների կողմից «ինվեստիտուրա» են ստացել Սմբատ Ա[36], Աշոտ Բ Բագրատունին[37], Գագիկ Ա Արծրունին[38]։ Այն պահին, երբ օրինական թագավոր Աշոտ Բ Բագրատունին, հենվելով բյուզանդական ռազմական ուժի վրա Կոստանդնուպոլսից հայրենիք էր վերադառնում, ապստամբություն բարձրացրեց նրա հորեղբորորդի Աշոտը (Շապուհի որդին)։ Աշոտ Շապուհյանը ապավինեց արաբական կուսակալ Յուսուֆի օգնությանը, որը բնականաբար երկյուղ էր կրում բյուզանդական ազդեցության զորեղացումից ու ամեն կերպ խանգարում էր Աշոտ Բ թագավորությանը։ Յուսուֆը ապստամբին թաց և սուր[39] հանձնեց։ Բայց օծումը, ըստ երևույթին, տեղի չէր ունեցել, և Աշոտ Շապուհյանը օրինավոր թագավոր չի ճանաչվել։

Նշանակները կրելիս են եղել անձնական բնույթ, նրանց հանձնումը չի դիտվել իբրև հարստության ճանաչում։ Բագրատունիների օրինակից դա կարելի է կռահել ամենայն պարզությամբ՝ իշխանության նշաններ ստացել են այդ թագավորական տան երեք սերունդ։ Ավելին, ստացվում է այն տպավորությունը, որ նշանակները չեն եղել անդամ իրավունքների ցմահ ճանաչում։ Սմբատ Ա թագ է ստացել երկու անդամ՝ արաբական կուսակալ Աֆշինից[40] և նրա հաջորդ Յուսուֆից. Յուսուֆը «կրկին պսակեալ զՍմբատ բազում ընչիւք», —նկատում է Ասողիկը։ Մի քանի անդամ նշանակներ է ստացել Գագիկ Ա Արծրունին։ Առաջին անդամ այդ նշանակները նրան հանձնեց Յուսուֆը[42]։ Իմանալով, որ Գագիկը դարձել է թագավոր «ի վերայ Հայաստանեայց», ասում է Թովմա Արծրունու շարունակողը, Մուկտադիր խալիֆը ուղարկեց նրան «թաց և հանդերձս զարդուց զարմանալիս»[43]։ Այնուհետև խալիֆի պատվիրակները «կրկին անդամ» թաց և զգեստներ հանձնեցին Գագիկին[44]։ 919 թ. Յուսուֆը պաշտոնից հանվեց, իսկ նրա տեղն ուղարկվեց Ուբայդ (կամ Աբդ) Ալլախ իբն Մուհամմադ ալ-Ֆարիկին, Հովհաննես Դրասխանակերտցու Փարկինին։ Ալ-Ֆարիկին երրորդ անդամ («երեքկին») պսակեց Գագիկ Ա Արծրունու գլուխը[45]։

---

34 Դրասխանակերտցի, էջ 139։

35 Նույն տեղում։ «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 116—117։ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 179—180։

36 Դրասխանակերտցի, էջ 146—147։ Ասողիկ, էջ 161—162։ «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861. էջ 128։

37 Դրասխանակերտցի, էջ 300։

38 Թովմա Արծրունի, էջ 285։

39 Դրասխանակերտցի, էջ 293, նաև Ասողիկ, էջ 169։

40 Դրասխանակերտցի, էջ 146—147։

41 Դրասխանակերտցի, էջ 197։ Ասողիկ, էջ 163։

42 Թովմա Արծրունի, էջ 285։

43 Նույն տեղում, էջ 286։

44 Նույն տեղում, էջ 286—287։

45 Դրասխանակերտցի, էջ 306։

Սկզբնաղբյուրների տեղեկություններն արաբական նշանակների մասին ցույց են տալիս, որ իշխանության այդ նշանները տրվում էին ad hoc, հայոց այս կամ այն թագավորի իշխանությունը նրանք հաստատում էին տվյալ պահի համար։ Մնալով խալիֆի վասալ, հայոց թագավորը պարտավոր էր ապահովել հարկերի կանոնավոր մուտքը[46] և այդ առումով նա ինչ-որ չափով համարվում էր խալիֆայության պաշտոնյա և ճիշտ այնպես, ինչպես վալիի կամ ամիրի լիազորությունները, չէին կարող լինել ցմահ, նույնպես, ըստ երևույթին, մերժում էին ճանաչել նաև հայոց թագավորի իշխանությունը ցկյանս (էլ չենք ասում նրա դինաստիական իրավունքների մասին)։

IX դարի վերջերին արաբական կուսակալների անջատողական ձգտումները բացահայտվեցին ամենայն պարզությամբ։ Երբեմն այդ կուսակալները իրենց զգում էին կենտրոնական իշխանությունից բոլորովին անկախ, կարող էին պառակտել, և այդպիսի դեպքում ապստամբությունը ճնշվում էր գինված ուժով։ Տեղում նրանք կարող էին վարել բոլորովին անկախ քաղաքականություն։ Զարմանալի չէ ուրեմն, որ հայոց թագավորները նշանակներ էին ստանում ոչ միայն խալիֆից, այլև նրա կուսակալներից։ Նշանակներ ուղարկելով այս կամ այն հայոց իշխանավորին, արաբները դրանով հաստատում էին նրա առաջնությունը մյուս իշխանավորների նկատմամբ։ Նշանակները դառնում էին Հայաստանում վարվող արաբական քաղաքականության զորեղ միջոց։ Բայց միաժամանակ և՛ Բագրատունիները, և՛ Արծրունիները համարվում էին ընդհանրապես լիիշխան տիրակալներ, թագավորներ։ Իբն Հաուկալը Հայաստանի մասին գրում է. «Հնում [այդ հողերը] պատկանելիս են եղել անբաժանելիորեն Սիբատ իբն Աշոտին հայոց թագավորին (ملك الارمن) և նրա նախնիներին և միշտ մնացել են նրանցից ամենանշանավորի ձեռքում»։ Նրանք, հայերը, շարունակում է հեղինակը, հպատակվեցին Յուսուֆին սկզբնական իսլամի դաշնագրությունների պայմաններին համաձայն[47]։

Ի՞նչ էին ներկայացնում իրենցից այդ նշանակները։ Նրանց հավաքածուի անհրաժեշտ առարկան էր թագը։ Սմբատ Ա թագի մասին ասված է, որ այն եղել է «յոսկւոյ Սուփերայ կազմեալ»։ Բառարաններում Սուփերը նույնացվում է Սուփքի հետ[48], բայց Սուփքում, ինչքան հայտնի է, ոսկու հանքեր չեն եղել[49]։ Իրականում խոսքը Սուփեր երկրի մասին է, որը հիշատակված է Աստվածաշնչում՝ «և չոգան ի Սուփերա և առին անտի ոսկի չորեքհարիւր և քսան տաղանտ» (Գ Թագաւորութեանց, 9,28)։ Սուփերի ոսկին բարձրորակ է եղել և տվյալ դեպքում այդ «յոսկւոյ Սուփերայ» դարձվածքը ակնարկում է ոչ թե թագի նյութի ծագման վայրը, այլ ընդգծում է նրա որակը։ Թագը ունեցել է հատուկ՝ մարգարտով զարդարված կապեր՝ «և ի նմին յելուզեալ

---

46 Տե՛ս, օրինակ, Թովմա Արծրունի, էջ 247, 283, 284, 286։ Դրասխանակերտցի, էջ 167, 169, 170, 193, 330։

47 Opus geographicum auctore Ibn-Haukal... ed. J. H. Kramers, Lugduni Batavorum-Lipsiae, 1939, էջ 343։

48 Տե՛ս, օրինակ, «Նոր Հայկազեան բառարան», Ր, էջ 751։

49 Հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», I, Երևան, 1971, էջ 51—52։

յեռեալ վարսակալ մարգարտատող տպագարդութիւնս»։ Գագիկ Ա Արծրունու թագի մասին ասված է, որ այն կատարված է եղել մեծ վարպետությամբ, պատրաստված մաքուր ոսկուց։ Աղթամարի տաճարի արևմտյան ճակատի վրա պահպանվել է մի բարձրաքանդակ, ուր Գագիկ Արծրունին պատկերված է տաճարի մանրատիպարը ձեռքին։ Գագիկի գլխին մետաղյա թագ է, բայց արդյո՞ք դա այն թագն է, որ նա ստացած է եղել Յուսուֆից։

Հայտնի է, որ Սմբատ Բ Բագրատունին և Գագիկ Ա Բագրատունին կրել են չալմա (նրանք մի քանի անգամ քանդակված են այդպիսի գլխարկներով)։ Բացառված չէ, որ նման չալմաները ևս մտել են խալիֆների և նրանց կուսակալների կողմից ուղարկված նշանակների հավաքածուի մեջ։ Այդ նշանակների թվին են պատկանել նաև թանկարժեք քարեր, հագուստներ, գարդեր, ազնվական ձիեր իրենց կազմով[50]։

Աշոտ Բ Բագրատունին վերջին հայոց թագավորն էր, որ նշանակներ էր ստացել արաբներից, այնուհետև միջազգային իրավական տեսակետից հայկական թագավորություններն անկախ են արաբներից։

* * *

Նախքան արաբական արշավանքը Հայաստանի կապերը արաբների հետ կարող էին միայն պատահական բնույթ կրել (եթե այդպիսի կապեր առհասարակ գոյություն են ունեցել)։ Նման պայմաններում էին գտնվում մի շարք այլ ժողովուրդներ ևս։ Հայ-արաբական հարաբերությունների սիստեմը կազմավորվում էր արդեն տեղի ունեցած արաբական նվաճման պայմաններում։

Բյուզանդական նվաճումը, ի տարբերություն արաբականի, ունեցել է բազմադարյան նախապատմություն։ Մ. թ. ա. 190 թ. տեղի ունեցավ Մագնեսիայի ճակատամարտը, որը շրջադարձային դեր կատարեց Առաջավոր Ասիայի պատմության մեջ՝ այստեղ առաջին անգամ երևացին հռոմեական լեգեոնները։ Այդ շրջանից են սկսվում հայերի և հռոմեացիների հարաբերությունները, որոնք մ. թ. ա. I դարի 70-ական թթ. վերջերից դառնում են փաստորեն ինքնհատակյան[51]։ Հայաստանի ու Հռոմի բազմաձև հարաբերությունները ժառանգում է Բյուզանդական կայսրությունը։ Կանգ չառնելով հայ-բյուզանդական հարաբերությունների ողջ պատմության վրա, շեշտենք միայն, որ Հայաստանի առաջին (387) և հատկապես երկրորդ (591) բաժանման հետևանքով հայ բնակչության մի զգալի մասը դարձավ կայսրության հպատակ։ Սակայն արաբական արշավանքը մի քանի տասնյակ տարիների ընթացքում ջնջեց կայսրության հաջողությունները՝ Հայաստանը նվաճելու ուղղությամբ։ Բյուզանդիայի կապերը Հայաստանի կենտրոնական մարզերի հետ խզվեցին։ Սակայն քաղաքական ուսմունքը, որի համաձայն հայերը դիտվում էին որպես կայսրության հպատակներ, վերանայման երբեք չենթարկվեց։ Այն ջանքերը, որոնք թափում էր կայսրությունը՝ Հայաստանը վերանվաճելու համար, ըստ էության այդ սկզբունքի իրականացումն էին։

---

50 Դրասխանակերտցի, էջ 139, 147, 197—198, 300։ Թովմա Արծրունի, էջ 285—286։

51 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», I, էջ 524—525, 583 և հտ.։

Այստեղ բյուզանդական քաղաքագետները կարող էին հենվել նաև դարավոր այն պատկերացումների վրա, որոնց համաձայն մի տարածություն, որը երբեվիցե պատկանելիս է եղել կայսրությանը, իսկ հետո անցել անօրեններին, անպայման պիտի վերադառնա օրինավոր տիրակալին։

Բյուզանդիայի կողմից հայկական հողերի վերանվաճման հետ կապված հանդամանքները քննության առնելիս անհրաժեշտ է հաշվի նստել մեր տեսակետից մի շատ կարևոր հարցի հետ։ Հայաստանի արևմտյան մասը արաբական լծից ազատագրվեց բյուզանդական զորքերի առաջխաղացման շնորհիվ։ Այդ գործողությունները հանդիսացան, այդպիսով, վերը հիշատակված քաղաքական տեսության ասես անմիջական իրականացումը։ Այդ գործն ավարտվեց մոտավորապես X դարի կեսերին՝ 949 թ. վերջնականապես դրավվեց Թեոդոսուպոլիս-Կարինը՝ Հայաստանում բյուզանդական տիրակալության երբեմնի պատվարը, որն այժմ ևս չէր կորցրել իր նախկին ստրատեգիական նշանակությունը։ Օրակարգի հարց էր Հայաստանի այն մասերի բռնագրավումը, որոնք տարածվում էին դեպի արևելք և հասցրել էին արդեն ինքնուրույն կերպով թոթափել արաբական լուծը։ Վերականգնելով ինքնուրույն պետականությունը, Հայաստանի այդ մասերը այդու ձեռք էին բերել որոշ քաղաքական կշիռ։ Այս հողերի միացումը կայսրությանը կապված էր, բնականաբար, և՛ ռազմական, և՛ դիվանագիտական հատուկ բարդությունների հետ։

Խնդրո առարկա երկրամասերի միջազգային-իրավական ստատուսը[52] քննելիս հարկավոր է նկատի ունենալ, որ հայկական պետությունների և կայսրության միջև գոյություն ունեցող կապերը սահմանվում էին առնվազն երկու սիստեմի համաձայն. երկուսն էլ գործում էին Բյուզանդիայի, նաև մյուս պետությունների հետ ունեցած հարաբերությունների ասպարեզում։

Հայտնի է, որ ողջ միջնադարի ընթացքում գործող դեր էր կատարում իդեալական «գերդաստանի» գաղափարը, որը կապում էր տիրակալներին, նմանապես նաև նրանց հպատակ ժողովուրդներին։ Այդ պատկերացումները գալիս են հեռավոր անցյալից։ Ֆ. Դյոլգերը, որն առավել բազմակողմանի և խորապես էր ուսումնասիրել այդ երևույթը, նրա առանձին տարրեր գտնում է Դիոկղետիանոսի և անգամ Պտղոմեոսների շրջանում[53]։ Տիրակալների խորհրդավոր «գերդաստանը» միաժամանակ նաև ռեալ քաղաքական ինստիտուտ էր, որը կարգավորում էր միջազգային հարաբերությունները[54], իսկ կապերի աստիճանն ու բնույթը որոշող տերմինները դառնում էին իրավական տիտղոսներ, ein Rechtstitel[55]։ Այդ տիտղոսները, որոնք կցված էին բյուզանդական կայսեր պայմանագիր կողմերի ներկայացուցիչներին, որոշում էին ինչպես այդ տիրակալների, այնպես էլ նրանց ժողովուրդների տեղը հատուկ հիերարխիկ սկզբունքի համաձայն։

---

52 «Ստատուս» հասկացողությունը այստեղ օգտագործված է պայմանական ձևով. քննության են առնված մի կողմից բյուզանդական, մյուս կողմից՝ հայկական տեսակետները, որոնք միշտ չէ որ պիտի համընկնեին։

53 Հիմնական աշխատությունները ժողովված են՝ F. Dölger, Byzanz und die europäische Staatenwelt, Ettal, 1953, էջ 31—69, 159—196 (այսուհետև՝ BES).

54 Նույն տեղում, էջ 35, 52։

55 Նույն տեղում, էջ 36։

IX—X դդ. այդ յուրօրինակ «գերդաստանը» ունեցել է հետևյալ կառուցվածքը. «գերդաստանի» պարագլուխը եղել է, բնականաբար, բյուզանդական կայսրը, «հոգևոր հայրը», որն ունեցել է patria potestas, չնայած ինքն իր հերթին հոգևոր հայր է ճանաչում Հռոմի պապին։ Կայսեր և «գերդաստանի» այլ անդամների միջև եղած հարաբերությունները տարածվել են երեք ուղղությամբ։ Ամենաբարձր դիրքը գրավել են կայսեր «հոգևոր եղբայրները»[55], ըստ որում ուժերի ոեալ հարաբերակցությունը կարող էր առիթ ծառայել, որպեսզի վերջիններս հավակնեին որոշ իրավահավասարության։ Այնուհետև գալիս էին կայսեր «հոգևոր զավակները», իսկ ստորին աստիճանի վրա գտնվում էին նրա «բարեկամները»։

Հոգևոր ազգակցական կապերի սիստեմը և այդ կապերին վերաբերող տերմինները պատկանել են բացարձակապես միջազգային-իրավական բնագավառին։ Այդ սիստեմը նախատեսած է եղել, ըստ երևույթին, միայն երկկողմանի կապեր՝ բյուզանդական կայսր — օտարերկրյա պարտադիր կողմ։ Կայսեր «հոգևոր զավակները» եղբայր չէին դառնում, իսկ «բարեկամները» կարող էին միմյանց նկատմամբ թշնամի լինել։

Կոստանդինոս Ծիրանածնի «Արարողությունների մասին» աշխատության մեջ իբրև Բ գրքի 48-րդ գլուխ պահպանվել է մի յուրահատուկ հրահանգ՝ պաշտոնական նամակներ կազմելու համար։ Այստեղ բերված են օտար տիրակալներին ուղարկվելիք գրությունների ինսկրիպցիաների բանաձևեր։ Գրությունները պիտի հասցեագրվեին հետևելով այդ ձևերին։ Սույն վավերագիրը կազմված է Կոստանդինոս Ծիրանածնի և նրա որդու՝ ապագա Ռոմանոս Բ օրոք 944—959 թթ., սակայն հիմքում դրված է ավելի հին շերտ։ Փաստաթուղթն ունի նշաններ, որոնք ցույց են տալիս, որ դիվանագիտական արձանագրություններ փոփոխություններ է կրել։ Տվյալ դեպքում կարևոր է նշել, որ սույն վավերագրում արձագանք գտած պրակտիկան վերաբերում է Հայաստանին՝ սկսած Աշոտ Ա Բագրատունուց, այն է՝ 886 թ.[57]։

48-րդ գլխի երեք հասցեատեր համարվել են բյուզանդական կայսեր հոգևոր զավակներ. դրանք են՝ Մեծ Հայքի, Ալանաց աշխարհի և Բուլղարիայի տիրակալները։ «Մեծ Հայքը» այստեղ ոչ թե աշխարհագրական, այլ քաղաքական տերմին է, որը բյուզանդացիք, հայերի օրինակով[58], կապում էին Բագրատունյաց թագավորության հետ։ Հետագայում այդ անունը կհիշատակի Սկիլիցեսը, խոսելով Հովհաննես-Սմբատի և Գագիկ Բ մասին, այդ անունը կժառանգի նաև համապատասխան բանակաթեմը։ Այսպիսով, բյուզանդական կայսեր հոգևոր զավակներից մեկը Բագրատունյաց «Մեծ Հայքի» թագավորն է եղել։ Հայաստանի մյուս թագավորները այդպիսի տիտղոս չեն ունեցել։

---

[56] G. Ostrogorsky, The Byzantine Emperor and the Hierarchical World Order. „The Slavonic and East European Review", XXXV, № 84, 1956, էջ 11—12։

[57] Constantini Porphyrogeniti imperatoris de cerimoniis aulae Byzantinae, I, Bonnae, 1829, էջ 686. 4—692. 2. ամբողջությամբ թարգմանված է հայերեն՝ Բարթիկյան, Կոստանդին Ծիրանածին, էջ 150—154։

[58] Հմմտ. Ասողիկ, էջ 285՝ Գագիկ Ա Բագրատունին որպես Մեծ Հայքի թագավոր։ Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 19։

Բյուզանդական կայսրության և «Մեծ Հայքի» միջև եղած հարաբերությունների իրավական կողմը, որն արձագանք է գտել «հոգևոր զավակ» յուրահատուկ տերմինի մեջ, բազմիցս գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը, բայց, ինչքան մեզ հայտնի է, այդ հարցը քննության է առնվել միայն հունական աղբյուրների սահմաններում։ Մինչդեռ այդ «հոգևոր ազգակցության» մասին տեղեկություններ են պահպանվել նաև հայ հեղինակի մոտ, այն էլ այնպիսի լավատեղյակ, ինչպիսին է Հովհաննես Դրասխանակերտցին։ Հայտնի է, որ իր մահվան նախօրեին Բարսեղ Մակեդոնացի կայսրը (867—886) ճանաչեց Աշոտ Ա Բագրատունու թագավորական իրավունքները։ Կայսեր և թագավորի միջև «խաղաղութեան և նուաճութեան և սիրոյ» պայման է հաստատվում, ըստ որում Բարսեղը Աշոտին հայտարարում է որդի սիրելի[59]։ Լևոն Զ Իմաստունը պարգևներ ու պատիվներ է շնորհում Սմբատ Ա Բագրատունուն, բայց, շարունակում է պատմիչը, «մեծ քան զայն այն էր, որ զորդի սիրելի կայսր զՍմբատ իր անուանէր՝ սիրալիր դաշամբք ուխտից»[60]։ Վերադառնալով նույն առարկային, հեղինակը նշում է, որ որդի սիրելի լինելով, Սմբատ Ա պաշտում էր բյուզանդական կայսրին «իբրև վեհագունի քան զինքն և հօր հարազատի»[61]։ 913—914 թթ. Սմբատի որդի և հաջորդ Աշոտ Բ Երկաթը ժամանում է Կոստանդնուպոլիս։ Կայսրը ընդունեց Աշոտին իբրև իր գրեթե հավասարին, «միանգամայն իսկ և ուստր զնա մարտիրոսի և որդի սիրելի կայսր իւր անուանէր»[62]։ Աշոտ Գ Բագրատունուն ուղղված իր նամակում Հովհաննես Չմշկիկ կայսրը հասցեատիրոջն անվանում է իր «հոգեկան զավակ»[63]։

Անդամ առանձին վերցրած, այդ տվյալները ցույց են տալիս, որ բյուզանդական կայսեր և նրա հայ «զավակների» միջև գոյացած «ազգակցական» հարաբերություններն իրավական իրականություն են եղել և արձանագրվել հատուկ դաշինքով։ Մյուս կողմից, միայն այդ տվյալների հիման վրա կարելի է հաստատել, որ հոգևոր զավակի տիտղոսը «Մեծ Հայքի» թագավորները կրել են թագավորության հիմնադրման պահից առնվազն մինչև Աշոտ Ը։

Բյուզանդական կայսեր «հոգևոր զավակի» կոչումը Բագրատունիների մենաշնորհն էր։ Արծրունիները զրկված են եղել այդ պատվից։ Հայտնի է նաև մի դեպք, երբ հայաստանցի մի իշխան պիտի դառնար «արքոնների արքոն» (տե՛ս ստորև), հոչակվեր ամենայն հավանականությամբ հայոց թագավոր և ճանաչվեր բյուզանդական կայսեր «բարեկամը»։ Այդ նախագիծը մանրամասն շարադրված է Ռոմանոս Լակապենոս կայսեր գրության մեջ, որը կազմված է եղել 929—943 թթ.[64]։ «Բարեկամ» (φίλος) արտահայտության տիտղոսային բնույթը դրսևորվում է սույն նամակում ամենայն պարզությամբ։ Հասցեատերը հեռանկար ունի և՛ լինել, և՛ անվանվել կայսեր բարեկամը[65], հաղորդում է Ռոմանոս Լակապենոսը։

---

59 Դրասխանակերտցի, էջ 140։

60 Նույն տեղում, էջ 158—159։

61 Նույն տեղում, էջ 199—200։

62 Նույն տեղում, էջ 285։

63 Մատթէոս Ուռհայեցի, էջ 19։ «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 10՝ «հոգեւոր որդւոյ իմոյ»։

64 Կ. Յուզբաշյան, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 1։

65 Նույն տեղում, էջ 37։

Բյուզանդիայի միջազգային հարաբերությունների ասպարեզում գործել է մի ուրիշ սիստեմ ևս, որն ինչպես և առաջինը, իր հատուկ արտահայտությունն է գտել պաշտոնական տիտղոսների մեջ։ Անշուշտ, այստեղ ևս առաջնակարգ դերը ապահովված էր Բյուզանդիային՝ հանձին կայսեր։ Մյուս ժողովուրդների վրա գերիշխելու գաղափարը ենվում էր դեպի նախախնամությունը եղած հավատով. նախախնամությունն է, որ որոշել է կայսեր այդ դերը. ինչպես երկընքում մի աստված, այնպես էլ երկրում մի կայսր և այլն։ Բայց այդ գաղափարը առաջացնող բարդ պատճառների ամբողջությունից տվյալ դեպքում կարելի է վերանալ։ Մեզ կարևոր է որոշել Հայաստանի տեղը այդ սիստեմում և վերջինիս գործունեությունը։

Արդ, որպես պետությունների հիերարխիայի պարագլուխ հանդես է գալիս կայսրը։ 629 թ. նրա պաշտոնական տիտղոսն էր բասիլևս։ Այդ տիտղոսը միայն կայսեր մենաշնորհն էր։ Միքայել Ա (811—813) ստիպված եղավ բասիլևս ճանաչել նաև Կարլոս Մեծին, միաժամանակ, սակայն, լայնացրեց իր տիտղոսը և սկսեց անվանվել հռոմայեցիների բասիլևս, մինչդեռ Կարլոսը նրա համար մնաց սոսկ բասիլևս։ Բացառություն է կազմել նաև այն դեպքը, երբ բասիլևս ճանաչեցին Սիմեոն Բուլղարացուն (913), որը մինչ այդ արքոն էր անվանվում։ Ինչպես և Կարլոս Մեծի դեպքում, այդ քայլը փոփոխություն առաջացրեց կայսեր անվանման մեջ, վերջինս սկսեց կոչվել հռոմոց ինքնակալ բասիլևս։

Շարադրված փաստերը ցույց են տալիս, որ «Բագրատունյաց շրջանի» հայոց թագավորները ոչ մի կերպ չէին կարող լինել բասիլևսներ, չնայած հենց այդպիսի տիտղոս են կրել նրանց հեռավոր նախորդները մ. թ. ա. VI դարի կեսերից[66]։ Ավելին, Տիգրան Բ սկսած (95—55) դրամների վրա նշված է եղել երբեմն βασιλεὺς βασιλεων[67]։ Այնուամենայնիվ, մեզ հետաքրքրող շրջանում ևս ոչ պաշտոնական կոնտեքստում հայոց թագավորը կարող էր անվանվել նաև բասիլևս։ Այսպես, բյուզանդական գրող Կեկավմենոսը՝ Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունուն որակում է բասիլևս և բասիլևսների սերունդ[68]։ Սակայն հայոց թագավորի պաշտոնական տիտղոսը բյուզանդացիների աչքում եղել է արքոն կամ արքոնների արքոն։ Բյուզանդական տերմինաբանությունը (ինչպես նաև արաբական բատրիկ, բատրիկ ալ-բատարիկա անվանումները) բխում են հայկական իշխան, իշխանաց իշխան տիտղոսներից։ Հուն. ἀρχων բառի զուգորդումը հայերեն իշխանի հետ բացահայտ է։ Հայերեն Աստվածաշնչի բաղդատումը Սեպտուանգինտայի հետ ցույց է տալիս, որ 652 դեպքերից 630-ում հունարեն ἀρχων-ին համապատասխանում է հայերեն իշխանը[69]։ Այսպես, Կոստանդինոս Ծիրանածնի «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ արքոնների արքոն են Աշոտ Ա Բագրատունին[70],

66 Ս. Կրկյաշարյան, Թագավորական իշխանությունը հին Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1։

67 «Հայ ժողովրդի պատմություն», I, էջ 695—698։

68 Г. Г. Литаврин, Советы и рассказы Кекавмена. М., 1972. էջ 282.6, 10, էջ 333, ծան. 32։

69 Ս. Ս. Կոստանյան, «Նախարար» տերմինի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 157։

70 Constantine Porphyrogenitus. De administrando imperio. Greek text edited

Սմբատ Բ[71] և Աշոտ Բ Երկաթ[72]. այդ տիտղոսը հատուկ է Բագրատունիներին[73]։ Պահպանվել է պատրիարք Նիկողայոս Միստիկոսի թուղթը ուղղված «արքոնների արքունին»՝ Սմբատ Ա կամ Աշոտ Երկաթին[74]։ Կոստանդնուպոլիս ժամանած Աշոտ Երկաթին բյուզանդական պատմիչները որակում են իբրև «արքոնների արքունի» որդի[75]։ Լազարյան ավետարանի հիշատակարանում (887) ասված է, ի միջի այլոց, որ գիրքը արտագրված է իշխանուրեանն իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու[76]։ Եթե 887 թ. Աշոտ Ա արդեն ունեցել է թագավորական պատիվ (նրա գահ բարձրանալու ամենից հավանական թվականն է՝ 886), ապա պետք է մտածել, որ թագավոր դարձած Աշոտի բյուզանդական տիտղոսը կարող է արտահայտված լինել նաև իր բուն հայկական ձևով[77]։

Այսպիսով, մեզ հայտնի է, որ առաջին երեք Բագրատունիները արքոնների արքոն տիտղոսն են կրել։ Ինչ վերաբերում է Աշոտ Երկաթի եղբայր և հաջորդ Աբասին (929—953), ապա վերջինս եղել է մագիստրոս։ Այդ տիտղոսով նա հանդես է գալիս և՛ «Կառավարման մասին» աշխատության մեջ, և՛ Ռոմանոս Լակապենոս կայսեր թղթում[78]։ Մագիստրոսի տիտղոսը, որպես այդպիսին, չի վկայում որևէ «իջեցման» մասին, պարզապես այդ տերմինը պատկանում է «հաշվարկման» այլ սիստեմի։ Բայց ինչ-որ տեղաշարժ իրոք որ կատարվել է։ «Կառավարման մասին» երկում Վասպուրականի թագավոր Գագիկ Ա Արծրունին հանդես է գալիս որպես արքոն[79], սակայն «Արարողությունների մասին» աշխատության մեջ այլ տեսակետ է արտահայտված։ Ասպուրականի, այն է՝ Վասպուրականի արքոնը այժմ արքոնների արքունի պատիվն է ստացել. ըստ այդմ էլ պաշտոնական նամակը պիտի սկսվի հետևյալ բանաձևով. «Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի Քրիստոս աստված ինքնակալ օգոստոսներ, հռոմայեցիների կայսրեր՝ ամենաերևելի այսանուն արքոնների արքունին»[80]։ Ռոմանոս Լակապենոսի թղթում Գագիկ Արծրունին ևս հիշատակվում է որպես արքոնների արքոն[81]։ Այսպիսով, ինչ-որ պահին արքոնների արքունի պատիվը

---

by Gu. Moravcsik, english translation by R. J. H. Jenkins. Washington, 1967, 44 6, 13, 18, 20 (այսուհետև՝ DAI).

71 Նույն տեղում, 43/30, 33—4, 44/7, 19, 22, 26—7, 50, 120։

72 Նույն տեղում, 43/112, 44/9, 37։

73 Նույն տեղում, 44/38—9, 42, 45։

74 Հ. Մ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Բ թագավորին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4։

75 Տե՛ս N. Adontz, Etudes arméno-byzantines, Lisbonne, 1965, էջ 265։

76 Գարեգին [Հովսեփյան], Հիշատակարանք ձեռագրաց, ս. 84։

77 Պետք է խոստովանել, որ առաջարկված բացատրությամբ հարցը վերջնական լուծում չի ստանում։ Կասկածի տեղիք է տալիս «յիշխանուրեանն» արտահայտությունը. արդյո՞ք հիշատակարանի հեղինակը դիտում է Աշոտին իբրև իշխանաց իշխան այն իմաստով, ինչպես սույն տերմինը հասկացվել է թագավորական իշխանության հաստատումից առաջ և հրաժարվում է Աշոտին ճանաչել թագավոր։

78 DAI, 44/10, 36։ Յուզբաշյան, Ռոմանոս Լակապենոսի հասցեատերը. էջ 37։

79 DAI, 43/111։

80 De cerim., էջ 687, 4—8։

81 Յուզբաշյան, Ռոմանոս Լակապենոսի հասցեատերը, էջ 36։

շնորհվում է Վասպուրականի թագավորին։ Փոփոխություններ են առաջանում նաև «Մեծ Հայքի» թագավորի ինտիտուլյացիայում։ «Արարողությունների մասին» գրքում նշված է, որ «Մեծ Հայքի» արքոնների արքոնին ուղարկվելիք նամակը պիտի ունենա երեք սոլիդանոց կնիք, իսկ ինսկրիպցիան հետևյալ կերպ ձևավորվի՝ «Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի Քրիստոս աստված ինքնակալ օգոստոսներ, հռոմայեցիների մեծ կայսրեր՝ Մեծ Հայքի ամենաերևելի այսանուն պրոտին և հոգևոր մեր որդուն»[82]։ Դժվար չէ նկատել, որ «արքոնների արքոն» նշումը հանդես է գալիս նկարագրական մասում, իսկ բառացի վերարտադրված ինսկրիպցիայում, այսինքն նամակի միանգամայն պաշտոնական մասում, թագավորը անվանված է պրոտ։ Պրոտը (πρωτος) տերմին է, պաշտոնական տիտղոս։ «Արարողությունների մասին» երկի երկրորդ մասի 46-րդ գլխում թվարկված են այն տիտղոսները, որոնք տրվում են օտարազգի տիրակալներին։ Արքոնի և արքոնների արքոնի հետ մեկտեղ այստեղ հիշատակված է նաև պրոտը[83]։ Նման մի երևույթ դիտված է նաև Ալանիայի դեպքում։ Նկարագրական մասում Ալանիայի տիրակալը անվանված է էկզուսիոկրատոր, իսկ ինսկրիպցիայում նա էկզուսիաստ է[84]։ Թվում է, որ այստեղ ևս ինտիտուլյացիայի փոփոխություն է տեղի ունեցել։ «Արարողությունների մասին» աշխատությունը և հատկապես Ռոմանոս Լակապենոսի թուղթը բերում են այն համոզման, որ ըստ բյուզանդական տեսակետի տվյալ պահին Հայաստանում կարող էր լինել միայն մի արքոնների արքոն։ Տիտղոսակիրը ավագություն էր ստանում մյուս արքոնների նկատմամբ, չնայած վերջիններիս թվում կարող էին լինել ոչ միայն իշխաններ, այլև թագավորներ։ Միանգամայն հնարավոր է, որ «արքոնների արքոն» տերմինը, մտցնելով միջազգային-իրավական տիտղոսների ցանկի մեջ, բյուզանդացիք ելնում էին ոչ միայն այդ դարձվածքի՝ հայերեն իշխանաց իշխան տերմինի հետ եղած քերականական կապից, այլ նկատի էին ունենում նաև «իշխանաց իշխան» ինստիտուտի պրակտիկան։ Ինչպես արդեն ասվել է, ըստ արաբական պատկերացումների, իշխանաց իշխանը մյուս իշխանների համեմատությամբ առաջնություն էր ստանում։ Բյուզանդական հողի վրա ևս արաբական մոդելը պահպանել էր իր էական կողմերը։

Այսպիսով, մեզ հաստատապես հայտնի է, որ արքոնների արքոն են եղել Աշոտ Ա, Սմբատ Ա, Աշոտ Բ Բագրատունիները, Աշոտի մահից հետո այդ տիտղոսը անցել է Գագիկ Ա Արծրունուն[85] և վերջինիս օրոք առաջարկվել է Ռոմանոս կայսեր հայաստանցի հասցեատիրոջը։ Այստեղ մեր տեղեկությունները այդ ինստիտուտի մասին ընդհատվում են։ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» կազմում պահպանվել է Հովհաննես Չմշկիկ կայսեր թուղթը Աշոտ Գ Բագրատունուն (975), հետևյալ ինսկրիպցիայով՝ «Աշոտ շահնշահ Հայոց Մեծաց և իմ հոգևկան զաւակ»։ Հ. Բարթիկյանը ենթադրում է, որ սույն թղթի հունարեն բնագրում «շահնշահ» բառի տեղում դրված է

---

82 De cerim., էջ 686. 22—687.3։

83 Նույն տեղում, էջ 679.7։

84 Նույն տեղում, էջ 688. 2—6։

85 Գագիկ Ա արքոնների արքոն է դարձել 929 թ. հետո, այլ ոչ թե 908 թ. ինչ անց. հմմտ. Բարթիկյան, Կոստանդին Ծիրանածին, էջ 311, ծան. 81։

եղել ἀρχων των ἀρχοντων[86]։ Բայց մենք տեսանք, որ 929 թ. հետո սույն տիտղոսի կրողը եղել է Վասպուրականի և ոչ թե «Մեծ Հայքի» թագավորը և հիմք չկա ենթադրելու, որ տեղի է ունեցել հետադարձ փոփոխություն։ Ըստ Ա. Ռամբոյի, հայ շահնշահը տվյալ դեպքում համապատասխանում է հուն. πρῶτος-ին[87]։ Եվ իրոք, այդպիսին էր «Մեծ Հայքի» թագավորի տիտղոսը այն շրջանում, երբ կազմվել է (ավելի ճիշտ՝ խմբագրվել է) De cerim., II, 48։ Կարելի՞ է, սակայն, վստահ լինել, որ մինչև 70-ական թթ. կեսերը, երբ Հովհաննես Չմշկիկ կայսրը դիմում էր Աշոտ Գ Բագրատունուն, «Մեծ Հայքի» թագավորի ինտիտուլյացիայում նոր փոփոխություններ չեն առաջացել։ Այն տվյալները, որոնք վերաբերում են XI դարին, ոչ թե վերացնում, այլ ավելի շուտ արդարացնում են նման կասկածամտությունը։

1032 թ. Ռոմանոս Արգիրոս կայսրը իր եղբոր աղջկան կնության է տալիս Հովհաննես-Սմբատին, «Մեծ Հայքի» էկզուսիարքոսին, ասում է բյուզանդական պատմիչ Սկիլիցեսը[88]։ Պատմելով բյուզանդացիների կողմից Անիի գրավման մասին, նա հայտնում է, որ վրաց թագավոր Գեորգիոս Ա ապստամբության օրոք նրա դաշնակիցն էր Հովհաննես-Սմբատը՝ ὁ τῆς τοῦ Ἀνίου κορεσσων χώρας[89]։ Ապստամբությունը պարտության մատնվեց, և կայսրը, Հովհաննես-Սմբատին մագիստրոսի տիտղոս շնորհելով, նրան ցմահ նշանակեց «Անիի և այսպես կոչված Մեծ Հայքի արքոն»[90]։ Հովհաննես-Սմբատի հաջորդ Գագիկ Բ անվանված է այստեղ Անիի տոպարքոս[91]։

Ստուգիչ տվյալների բացակայության պատճառով մենք չենք կարող որոշել Սկիլիցեսի հաղորդման արժանահավատությունը։ Նման աղբյուրում սպասելի է որոշ անփութություն՝ տերմինաբանության հարցում։ Այնուամենայնիվ չի կարելի չնկատել, որ էկզուսիարքոս, արքոն, տոպարքոս՝ պաշտոնական տիտղոսներ են, որոնք նշված են նաև De cerim., II, 46. Κορεσσων-ը ցուցակում բացակայում է, կա κορωτοτος և κορος։ Հայտնի է սակայն, որ այդ տերմինը եղել է միաժամանակ նաև «Երջանիկ Արավիայի» տիրակալի պաշտոնական տիտղոսը[92]։ XI դարի գրականության մեջ տոպարքոսը սովորաբար Բյուզանդիային հարևան այլազգի ժողովրդի կամ երկրի առաջնորդ է։ Այդ նշանակությամբ բառս օգտագործված է Կեկավմենոսի մոտ[93]։ Հիմք կա ենթադրելու, որ այդ անվանումների գոնե մի մասը պաշտոնապես առնչվել է հայոց թագավորի հետ, անվանումներ, որոնք փոփոխվում էին ժամանակի ընթացքում։

Նշված թագավորություններից բացի բյուզանդական քաղաքականության ուղեծրի մեջ ներքաշված են եղել նաև հայկական մի շարք իշխանություններ։

---

86 Նույն տեղում, էջ 213, ծան. 12։ Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 302, ծան. 54։

87 A. Rambaud, L'Empire grec au Xe siècle, Paris, 1870, էջ 506, ծան. 2։

88 Ioannis Scylitzae Synopsis historiarum, rec. I. Thurn, Berolini et Novi Eboraci, 1973, էջ 385.39։

89 Scyl., էջ 435. 76—77։

90 Նույն տեղում, էջ 435. 84։

91 Նույն տեղում, էջ 435. 74։

92 De cerim., էջ 691. 24—692. 2, հմմտ. էջ 691. 20—23։

93 Տե՛ս Գ. Գ. Լիտավրին, նշվ. աշխ., էջ 405, ծան. 369։

Կայսրից հատուկ ձևավորված նամակներ էին ստանում Կոդովիտի, Տարոնի, Մոկսի, Անձավացիքի, Սյունիքի, Վայոց ձորի, Խաչենի «արքոնները»։ Այս ցուցակի յուրաքանչյուր հասցեն ունի նշան՝ Ἀρμενία։ Այս շարքին են հարում նաև Սևորդիքի (Ուտիքի) երեք արքոնները[94]։ Ինչպես ասվեց, «արքոն» տիտղոսի պաշտոնական բնույթը հաստատում է նաև De cerim., II, 46, չնայած առհասարակ այդ տերմինը բազմանշանակ է։

Բյուզանդական կայսեր պայմանագիր են եղել նաև Իվերիայի կյուրապաղատը, նրան հարևան չորս իշխանությունների արքոնները[95], Ալանիայի էկզուսիոկրատորը, Ավասգիայի (այն է՝ Արևմտյան Վրաստանի) էկզուսիաստը, Աղվանքի և կովկասյան մի շարք այլ իշխանությունների արքոնները[96]։ Կայսեր հետ հատուկ լարերով կապված են եղել Հայաստանի, Վիրքի և Աղվանքի կաթողիկոսները[97]։

Հիերարխիկ աստիճանի վրա այս կամ այն տիրակալի տեղը որոշող հատկանիշների թվին էր պատկանում նաև ուղարկվելիք նամակի արտաքին ձևավորումը։ Այն թղթերը, որոնք ուղարկվում էին «Մեծ Հայք» և Վասպուրական, կրում էին երեք սոլիդ արժողությամբ ոսկե կնիք։ Իվերիայի կյուրապաղատը, Ալանիայի էկզուսիոկրատորը (կամ էկզուսիաստը), Ավասգիայի էկզուսիաստը, Աղվանքի արքոնը ստանում էին երկու սոլիդանոց կնիքով նամակներ[98]։

Այն գրությունները, որոնք ուղարկվում էին Կոդովիտի, Տարոնի և այլ վայրերի արքոններին, Իվերիայի կյուրապաղատին և նրան հարևան չորս արքոններին, Ավասգիայի էկզուսիաստին, Աղվանքի արքոնին և կովկասյան մյուս արքոններին, վերջապես երեք կաթողիկոսներին՝ «կարգադրություններ» էին, κελεύσις, լատ. jussio[99]։ «Կարգադրությունները» դիտվում էին որպես կախվածության հատկանիշ և հակադրված էին «գրություններին» γράμματα[100]։ Բայց առանձին վերցրած այդ հատկանիշը որոշիչ դեր չէր կատարում։

Տարածված է այն կարծիքը, որ ոչ միայն խալիֆը, այլև Վասիլ Ա կայսրը թագ է ուղարկած եղել Աշոտ Ա Բագրատունուն։ Հիմք է ծառայում Վարդանի հաղորդումը. խալիֆը «զուարտ սրտի առաքէ [Աշոտին— Կ. Յ.] թագ և հանդերձս և երիվարս։ Զնոյն և կայսրն Վասիլ առաքէ, և աւրհնէ զթագն տէր Գէորգ»[101]։ Կիրակոս Գանձակեցին նույնպես պնդում է, որ «մահմեդական» թագից հետո Վասիլ Ա ևս թագ է շնորհում Աշոտին[102]։ Եթե այդ փաստը իրոք տեղի է ունեցել, ապա դա զարմանք չպիտի առաջացնի, նման դեպքեր եղել են,

---

[94] De cerim., 687.8—15; E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Kaiserreiches. Bruxelles. 1961, էջ 147—148։ Բարթիկյան, Կոստանդին Ծիրանածին, էջ 311—312, ծան. 82—89 (այստեղ նշված է նաև գրականությունը)։

[95] C. Toumanoff, The Bagratids of Iberia from the eighth to the eleventh century. II. „Le Muséon". 1961, № 74, 3—4, էջ 308։

[96] Տե՛ս Բարթիկյան, Կոստանդին Ծիրանածին, էջ 312—313, ծան. 97—104։

[97] De cerim., էջ 688. 19—22։

[98] Նույն տեղում, էջ 686. 24, 687. 5—6, 17, 688. 2—3, 8։

[99] Նույն տեղում, էջ 687. 15, 17, 688. 1, 8, 17—18, 21։

[100] BES, էջ 38։ E. Dölger, Byzantinische Diplomatik, Ettal. 1956, էջ 125 (124 էջի 45 ծան.)։

[101] Վարդան, էջ 117։

[102] Կիրակոս, էջ 80. 6—7։

օրինակ, հունգարական թագավորների նկատմամբ։ Ինչ վերաբերում է հայոց թագավորին, ապա այդ տվյալները բիում են ուշ շրջանի հեղինակներից, մինչդեռ ժամանակով մոտիկ պատմիչները, որոնք մանրամասն խոսում են նշանակների մասին՝ բյուզանդական թագի մասին լռում են։ Կասկած է առաջացնում նաև այն հանգամանքը, որ մի քանի տող վերև Վարդանը զետեղում է մի ֆանտաստիկ հաղորդում, իբր ժամանակին Վասիլ Ա Մակեդոնացին ինքն է Աշոտից կայսրական թագ խնդրել։ Ստացվում է այն տպավորությունը, որ Աշոտի ստացած բյուզանդական թագին վերաբերող հաղորդումներն ուշ շրջանի ենթադրություններ են, որոնք առաջացել են արաբական թագերի հիշողությունների ազդեցությամբ։ Նույն կերպ հարկավոր է արժեքավորել նաև Ստեփանոս Օրբելյանի պնդումը, իբր Աշոտ Բ հայրենիք ուղարկելուց առաջ Ռոմանոս Լակապենոսը նրան պսակել է թագով[103] (եթե առհասարակ «թագ կապելալ» դարձվածքը պիտի հասկանալ բառացի)։

Սակայն անկախ նրանից՝ հայոց թագավորին բյուզանդական թագ շնորհվել է թե ոչ՝ պետականության վերականգնումը Հայաստանում կատարվել է կայսրության գիտությամբ և նրա գործոն մասնակցությամբ. հետագայում ևս հայկական պետությունները մնացել են բյուզանդական տեսադաշտում։ Աշոտ Ա Բագրատունին թագավոր դարձավ Վասիլ Ա կայսեր «կամակցությամբ», նկատում է Ասողիկը[104]։ «Հոգևոր որդու» կոչումը և «արքոնների արքոնի» տիտղոսը տրվում էր անհատապես, այդ անվանումները երբեք չեն եղել թագավորական պատվի ատրիբուտներ, չնայած նրանցով օժտված են եղել հայ թագակիրների մի քանի սերունդ։ Հատկանշական է, որ Աշոտ Երկաթը արքոնների արքոն դարձավ միայն կայսեր հետ հանդիպելուց հետո. նա Կոստանդնուպոլիս ժամանեց՝ լինելով միայն «արքոնների արքոնի որդի»[105]։ Աբաս Ա Բագրատունին, ինչպես ասվեց, չստացավ այդ տիտղոսը։

Հայոց թագավորները ստանում էին նաև այն խմբի տիտղոսներ, որոնք ծագումով պալատական էին։ Աբաս Ա Բագրատունին մագիստրոս էր. մագիստրոս դարձավ նաև Հովհաննես-Սմբատը՝ իր թագավորությունը կայսրությանը կտակագրելուց հետո[106]։ VI—VII դդ. սկսած Բյուզանդիան շռայլորեն շնորհում էր այդպիսի տիտղոսներ։ Տիտղոսակիր կարող էին դառնալ ազնվական տոհմի մի շարք անդամներ։ Առանձին դեպքերում տիտղոսը ստանում էին սերնդից-սերունդ։ Դեպքեր էին լինում, երբ մի անդամ ստացված պատիվը դիտվում էր որպես տոհմային։ Տիտղոսը հիմք էր ծառայում տոհմանվանը, օրինակ՝ Մագիստրոսենց կամ Մաժիստրոսեան[107]։ Արաբ. բատրիկը, որը համապատասխան բյուզանդական տիտղոսի տառադարձությունն էր, դարձավ հայոց իշխանի հոմանիշը։ Ազնվականությանը այդպիսի տիտղոսներ շնորհելով՝ կայսրությունը նպաստում էր բյուզանդասիրական խմբավորումների առաջացմանը, որոնք իրենց դերը կատարեցին Բյուզանդիայի՝ դեպի արևելք առաջխաղացման ընթացքում։ Ինչպես նշում է Լ. Բրեյեն, պալատական տիտ-

---

103 Ստ. Օրբելյան, էջ 140։

104 Ասողիկ, էջ 157։

105 Տե՛ս ծան. 75։

106 Scyl., էջ 435. 83։

107 К. Н. Юзбашян, Анийская рукопись 1298 г., «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 89—90։

զոսը միաժամանակ և՛ պատիվ էր, և՛ վասալական կախվածության անհերքելի վկայություն[108]։ Սակայն այդ տիտղոսների բաշխումը բացահայտ կերպով չի հանգեցրել յուրահատուկ միջազգային-իրավական սիստեմի առաջացմանը։

Առանձնահատուկ տիտղոսները, որոնք ստանում էին օտարերկրացիք, կայսեր ողորմածության նշան էին։ Քանի որ հավասարությունը, բյուզանդական տեսանկյունից, ընդհանրապես բացառվում էր, ապա տիտղոսակիրը զոնե տեսականորեն պիտի ճանաչեր կայսեր ինչ-որ գերագույն իրավունքներ։ Բայց այդ հանգամանքը, որը անխուսափելի էր օտարերկրացիների հետ եղած հարաբերությունների ասպարեզում, հիշատակված տիտղոսներում բացահայտ կերպով չէր դրսևորվում։ Պարտավորական հարաբերությունները արտահայտելու համար օգտվում էին այլ տերմինաբանությունից։ Այդպիսի պարտավորություններ ստանձնողները դառնում էին կայսեր σύμμαχοι, φίλοι, πρόξενοι, ἐπίσκοποι կամ ὑπόσκοποι, ὑπήκοοι կամ δοῦλοι[109]։ Երբ Գագիկ Բ Բագրատունին դարձավ կայսրության թշնամին և դուրս եկավ բյուզանդական զորքերի դեմ, նա դադարեց լինել «բարեկամ և դաշնակից»[110], հաղորդում է Սկիլիցեսը։ Կոստանդինոս Ծիրանածնի ասելով, հայոց արքոնների արքոնը եղել է կայսեր դուլոսը, քանի որ վերջինս է նրան նշանակել և վերջինից է նա ստացել արքոնների արքոնի պատիվը[111]։ Թվում է, որ այդ բնորոշումը տարածվել է առաջին երեք Բագրատունիների վրա։

Նման հարաբերություններ հաստատվեցին ոչ միայն հայոց թագավորների հետ։ Դուլոս էր կայսիկների ամիրա Ահմադը[112], դուլոս էր Ավնիկի արաբական ամիրան[113]։ Վրաց Կյուրապաղատ Աշոտը Ռոմանոս Լակապենոսին խոստացավ կռվել կայսրության թշնամիների հետ, պաշտպանել նրա բարեկամներին, ողջ սրևելքը հպատակեցնել կայսրությանը։ Եթե Աշոտը հետևի «դուլոսության» (δουλωσύνη) և խոհեմության, ապա ոչ ոք չարամիտ փորձ չի անի նրա և նրա ազգականների իրավունքի վերաբերյալ[114]։ Աշոտը պիտի լինի կայսրության հավատարիմ և ազնիվ դուլոսն ու «բարեկամը»[115]։ Աշոտի եղբայր Բագրատը ևս կայսեր դուլոսն էր[116]։

---

108 L. Bréhier, Les institutions de l'Empire byzantin, Paris, 1970, էջ 241։

109 H. Ahrweiler, La frontière et les frontières de Byzance en Orient. „XIVe Congrès International des Etudes Byzantines. Bucarest, 6–12 septembre 1971". Rapports, II, էջ 9։ Այստեղ հիշատակված «բարեկամներին» պետք չէ շփոթել այն «բարեկամների» հետ, որոնք մտնում էին «տիրակալների և ժողովուրդների գերդաստանը» և արձանագրված են մասնավորապես De cerim., 48։ Գերդաստանի դեպքում φίλος-ը տիտղոսային բնույթ է կրում, մինչդեռ վերը հիշատակված շարքում այն՝ նշում է կայսրության հանդեպ ընդհանուր դիրքը։ Ցավոր, միշտ չէ, որ հնարավոր է լինում պարզել՝ ինչ իմաստով է օգտագործված բառը։

110 Scyl., էջ 436. 3–4։

111 DAI, 44/45–47։

112 Նույն տեղում, 44/110։

113 Նույն տեղում, 45/141։

114 Նույն տեղում, 45/107–113։

115 Նույն տեղում, 45/157՝ δοῦλος καὶ φίλος։ Ց. Դյուլդերը, կյուրապաղատ Աշոտին շփոթում է հայոց թագավորի հետ, տե՛ս BES, էջ 41, ծան. 10։

116 DAI, 45/151։

Հուն. ὀρφανός-ին հայերենում համապատասխանում է առհասարակ ծառա բառը։ Այդ տերմինը օգտագործվել է, ըստ երևույթին, նաև հատուկ նշանակությամբ՝ վասալի իմաստով։ Աշոտ Բ Բագրատունին մեկնեց Կոստանդնուպոլսից «բարեխորհուրդ ծառայական խոստմամբ»[117]։ Երբ վրաց թագավոր Դեորգի Ա 1022 թ. պարտություն կրեց Վասիլ Բ, նա ճանաչեց իրեն կայսրության «ծառա»՝ «գրէր զանձն իւր ծառայ Վասիլին»[118]։

Այն կախվածությունը, որն արտահայտում են վերևում բերված տերմինները, դիտվում է սովորաբար իբրև վասալական։ Բայց իրենք տերմինները չեն բացահայտում պարտավորության ծավալն ու բնույթը։ Չի դրսևորվում նաև առանձին տերմինների տարբերությունը (պետք է նկատի ունենալ, որ բերված շարքի հերթականությունը կամայական է)։ Սակայն ընդհանուր գաղափարը՝ այն տիրակալները, որոնց կցված են հիշատակված տերմինները, համարվել են կախյալ՝ դժվար թե վեճի առարկա լինի։ Ուրիշ բան է, որ կախվածությունը կարող էր լինել տեսական, գոյություն ունենալ միայն Կոստանդնուպոլսի քաղաքագետների երևակայության մեջ։ Կախվածության իսկական բնույթը հնարավոր է որոշել՝ ելնելով ոչ թե տերմինաբանությունից, այլ կոնկրետ փաստերից։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ կայսրության հետ եղած հարաբերությունները ձևավորված էին միջազգային-իրավական բնույթի մի քանի սիստեմների միջոցով։ Տերմինների բազմազանությունը որոշ չափով կարելի է բացատրել բյուզանդական գրասենյակի առանձնահատկություններով, բայց այդ երևույթի հիմքում դրված է, անշուշտ, տարբերակված մոտեցում դեպի բյուզանդական կայսեր պայմանագիր կողմերը։ Կարելի է չկասկածել, որ ժամանակակիցները հասկանում էին, թե ինչու տվյալ տիրակալի իրավական դիրքը ձևավորված էր հենց այդպես, և ինչ էր նշանակում տիտղոսի փոփոխությունը։ Յուրաքանչյուր տիտղոս ենթադրում էր մի հատուկ ենթատեքստ, հանդես էր գալիս որպես յուրահատուկ խորհրդանշան։

Կայսրությունը ձգտում էր խուսափել դիմազրկությունից, յուրաքանչյուր քիչ թե շատ նշանավոր միավորին աշխատում էր ապահովել հատուկ տեղ։ Ե՛վ «Մեծ Հայքի» արքոնների արքոնը, և՛ Ալանիայի էկզուսիոկրատորը եղել են բյուզանդական կայսեր «հոգևոր որդիները», սակայն մյուս սիստեմին պատկանող տիտղոսների տարբերությունը պայմանավորում էր նրանց տարբերությունը իրավական տեսանկյունից։ Մինչև անգամ այն դեպքում, երբ տիտղոսները նույնն էին՝ չի կարելի ասել, թե տիտղոսակիրների դիրքը համընկնում էր։ Ինչպես ասվեց, մի շարք հայ իշխաններ համարվում էին արքոններ։ Բայց ինչպիսի՞ տարբերություն կար Տարոնի ու Կոգովիտի, Վայոց ձորի և այլ արքոնների միջև։ Տարոնի տիրակալները իսկական կախվածության մեջ էին և ի վերջո ստիպված են եղել զիջել իրենց տիրույթը Բյուզանդիային։ Այլ իշխանությունների կախվածությունը ավելի շուտ անվանական էր։

Տիտղոսների զարմանալի բազմազանությունը արտահայտում է եղած կապերի բազմապիսությունը։ Եղել է, անշուշտ, ինչ-որ աստիճանավորում, մեկը մյուսի նկատմամբ տիտղոսները եղել են բարձր կամ ցածր։ Սակայն

117 Դրասխանակերտցի, էջ 292։
118 Մատթեոս Ուռհայեցի, էջ 51։

սիստեմների հիմքում ընկած է եղել երկակի սկզբունք՝ կայսր-օտարերկրացի տիտղոսակիր։

Բարդ կապերով են միացած եղել Կոստանդնուպոլսին հայ տիրակալները։ Իրրև վասալներ ժամանում էին նրանք բյուզանդական մայրաքաղաք։ Երբ կայսրը գտնվում էր Արևելքում, վասալները դուրս էին գալիս նրան ընդառաջ, օգնություն հասցնում զորքով ու մթերքով։ Հայ թագավորների գերիշխանական իրավունքները իրենց հպատակների նկատմամբ ոչնչով, թվում է, չէին խախտվում. ներքին գործերը քիչ էին հետաքրքրում բյուզանդական բաղաքագետներին։ Այլ բան է միջազգային հարաբերությունների աստիճանը, այստեղ նրանք երբեք չէին կորցնում իրենց գոնությունը, գգայուն կերպով արձագանքում էին ամենաաննշան փոփոխություններին։ Բավական էր, որ Արաս II Բագրատունին փորձեր իր կողմնորոշումը՝ նա իսկույն կորցրեց արքոնների արքոնի տիտղոսը։

Վասալական կախվածություններ խոշոր դեր կատարեց այն անարյուն ակցիաներում, երբ արևելյան տիրակալները ստիպված եղան գիջել իրենց տիրույթները կայսրին՝ «սյուզերենին» և տեղափոխվել Բյուզանդիա։ Այդ առումով բյուզանդական դիվանագիտության բազմամյա ջանքերը ավարտվեցին կատարյալ հաջողությամբ։ Նվաճելով Հայաստանը, բյուզանդական կայսրները առաջնորդվում էին այն համոզմունքով, որ նրանք իրացնում են իրենց գերիշխանական իրավունքները։

АРМЕНИЯ «ЭПОХИ БАГРАТИДОВ» В МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОМ АСПЕКТЕ

К. Н. ЮЗБАШЯН (Ленинград)

(Резюме)

С конца IX в., когда в Армении, находившейся под арабским владычеством, начался процесс формирования новой государственности, страна вновь стала субъектом международного права. Генезис царской власти был связан с институтом «князя князей», при котором один из армянских князей получал право первенства по отношению к остальным и становился своеобразным посредником между арабской администрацией и местным населением. В начальный период царская власть функционировала под эгидой халифата, армянские цари получали инсигнии от арабов. Последним армянским царем, принявшим «инвеституру» от арабов, был Ашот II Багратуни (914—929). Впоследствии армянские царства в международно-правовом смысле были независимы от арабов.

Правовые моменты в армяно-византийских отношениях IX—XI вв. опирались на многовековую традицию. С византийской точки зрения, армянские цари были вассалами императора. Вассальная зависимость конституировалась применительно к нескольким системам. Багратиды вписывались в известный институт мистической «семьи правителей и народов» во главе с императором и по крайней мере до Ашота III включительно (953—977) считались духовными сыновьями василевса. В промежуток между 929 и 943 гг. анонимный армянский князь должен был

стать «другом» императора. В обоих случаях эти наименования были специфическими правовыми титулами, обладавшими безусловной действенностью.

Модифицируя арабскую модель, Византийская империя учредяла в Армении институт «архонта архонтов», когда один из армянских царей получал право первенства перед остальными царями и князьями. Согласно византийским представлениям, в данный момент в Армении мог быть лишь один архонт архонтов; этот титул носили Ашот I, Смбат I и Ашот II Багратуни, затем царь Васпуракана Гагик I Арцруни, а в какой-то момент (при жизни Гагика) титул должен был перейти к тому армянскому князю, который становился «другом» императора.

Вассальная зависимость устанавливалась с помощью и других, рассмотренных в статье систем. Правовые моменты сыграли немалую роль в тех бескровных акциях, когда восточные вассалы были вынуждены уступать свои владения императору-«сюзерену».